# ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Գևորգ Ռաֆիկի Ալեքսանյանս, ծնվել եմ 1963 թվականի դեկտեմբերի 23-ին Լենինական քաղաքում:

1971-1981 թթ. սովորել և ավարտել եմ Լենինականի թիվ 9 միջնակարգ դպրոցը:

1981-1985 թթ. սովորել և ավարտել եմ Լենինականի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի մաթեմատիկայի բաժինը:

1983-1985 թթ. ուսմանը զուգահեռ աշխատել եմ Լենինականի «Սպարտակ» ԿՄԸ-ում, որպես հունա-հռոմեական ըմբշամարտի մարզիչ:

1985-1987 թթ ծառայել եմ խորհրդային բանակում:

1987-1997 թթ աշխատել եմ «Հայաստան Մարզական Միություն» կամավոր ընկերության հունա-հռոմեական ըմբշամարտի մարզադպրոցում՝ որպես ուսմասվար:

1997 թվականից նշանակվել եմ Գյումրի քաղաքի «Մենապայքարային մարզաձևերի մարզադպրոց»-ի տնօրեն:

2014 թվականին մարզադպրոցը վերանվանվել է Գյումրի համայնքի «Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, որտեղ աշխատում եմ որպես տնօրեն մինչև օրս:

1978 թվականից սկսել եմ զբաղվել հունա-հռոմեական ըմբշամարտով:

1981 թվականին լրացրել եմ ԽՍՀՄ սպորտի վարպետի նորման:

1999 թվականից ըմբշամարտի միջազգային կարգի մրցավար եմ:

2010 թվականին ՀՀ նախագահի կողմից արժանացել եմ ՀՀ «Վաստակավոր մարզիչ» կոչմանը:

2006 թվականին և 2012 թվականին ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել եմ «Շնորհակալագրերով»:

2014 թվականին ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել եմ Երախտագիտության մեդալով:

2014 թվականին պարգևատրվել եմ ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի հուշամեդալով:

2014 թվականին պարգևատրվել եմ ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի «Պատվավոր աշխատող» կոչումով:

2016 թվականին ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել եմ «Մովսես Խորենացի» մեդալով:

2016 թվականին պարգևատրվել եմ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության «Ոսկե» մեդալով:

2016 թվականին պարգևատրվել եմ Դիլիջանի համայնքապետարանի «Ոսկե» հուշամեդալով:

2016 թվականին պարգևատրվել եմ ՀՀ պաշտպանության նախարարության «Վազգեն Սարգսյան» մեդալով:

Ամուսնացած եմ, ունեմ երկու որդի:


